և մեծ դեր եյին խաղում նախընթաց տարիների հացամե-
թերումների գործում: Նրանք այդ աշխատանքի մեջ հսկա-
յական փորձառութիւնն են ձեռք բերել: Հացամթերումների
ընթացքում կոփված այդ կաղերի փորձառութեան ոգտա-
գործումն այս տարի ևս հացամթերումների հաջողութեան
կարևորագույն պայմաններից մեկը պետք է լինի: Քաղաք-
այն փորձված ուժերը գլուղ պիտի ուղարկեն հացամթե-
րումներ լավ կաղմակերպման և պլանը ժամանակին ի-
րագործելու համար: Տեղական կազմակերպութիւնները
պետք է աշխատեն նպատակահարմար կերպով և մաքսի-
մալ եֆֆեկտով ոգտագործել ուղարկված ընկերներին:

Սակայն այն մարդիկ, վորոնք այս բոլոր կազմա-
կերպչական միջոցները ձեռնարկելիս և հացամթերումները
կաղմակերպելիս մոռանում են, վոր հացամթերումները վա-
ղուց արդեն լայն մատապակե քաղաքական տնտեսական
կամպանիա յեն, նրանք խոշորագույն մոլորութեան մեջ են
ընկնում և հացամթերումների պլանի իրագործումը սպառ-
նալիքի տակ են դնում: Հացամթերումները կարելի չեն հա-
ջողութեամբ ավարտել միայն ամենալայն մասսայական աշ-
խատանքի միջոցով, մոբիլիզացիայի յենթարկելով հացամթե-
խողներին, չքավոր-միջակ անհատավարներին, սովխոզ-
ների և ՄՏԿ բանվորների, մի խոսքով ամբողջ հասարակա-
նութեան ամենալուրջ ուշադրութիւնը:

Մասսայական աշխատանքը պետք է կապվի հացամե-

թերումների բոլոր կոնկրետ խնդիրների հետ: Յուրաքանչ-
յուր տվյալ մոմենտին մասսաների ուշադրութեանը պետք
է ուղղել այս կամ այն կոնկրետ, թեկուզ տեխնիկական,
հարցերի վրա: Միևնույն ժամանակ բացատրական աշխա-
տանքը պետք է բաց անի մասսաների առաջ հացամթե-
րումների հսկա նշանակութիւնն ու դերը մեր ամբողջ սո-
ցիալիստական շինարարութեան և մասնավորապէս հնգամ-
յակի յերրորդ, վճռական տարվա ժողտնտեսական պլանի ի-
րագործման համար:

Կոլխոզների և սովխոզների հացամթերումների պլանը
քննութեան պետք է յենթարկվի կոլխոզիկներին, սովխոզներին
բանվորների ժողովներում: Այնտեղ պետք է հայտարարվեն
մասսաների առաջ պլանների իրագործման բոլոր անհրա-
ժեշտ պայմանները, պետք է մատնանշվեն դրան արդելք
հանդիսացող բոլոր մոմենտները և նրանց հաղթահարման
համար պիտի համախմբվեն բոլոր կոլխոզիկներն ու բան-
համար վիտի համախմբվեան կողմից հացամթերումների
վորները: Հասարակայնութեան կողմից հացամթերումներ
ընթացքի վրա հսկողութիւնը, նրա մոտիկ մասնակցու-
թիւնն ապահովելու համար անհրաժեշտ է, անցյալ տարի-
ների որինակով, կազմակերպել յուրաքանչյուր գլուղում և
սովխոզում հացամթերումներին ոժանդակող հանձնաժողով-
ներ: Գոյութիւն ունեցող կարծիքը թե՛ համատարած կոլեկտի-
վացման պայմաններում այդ հանձնաժողովներն արդեն ան-
կենսունակ են և հարկավոր չեն, միանգամայն սխալ է և
անընդունելի: Չնայած, վոր չքավոր-միջակ գլուղացիու-
թեան ճնշող մեծամասնութիւնը մեր յերկրամասի պայման-
ներում մտել է կոլխոզների մեջ, այնուամենայնիվ ոժանդա-
կել հանձնաժողովների դերը հացամթերումների կաղմակերպ-
ման և հաջող իրագործման մեջ չափազանց մեծ է: Նախ,

խնչպես վերև մի քանի անգամ շեշտել ենք, դեռ ևս կան և անհատավար տնտեսություններ, մանավանդ կոլեկտիվացման տեսակետից յետ մնացած ռայոններում, վորոնց մեջ հարկավոր է մեծ աշխատանք կատարել հացամթերումների ասպարիզում: Ոժանդակիչ հանձնաժողովներն այստեղ աշխատանքի ասպարեզ ունեն դեռ ևս: Բացի դրանից, ալիքի լայն ասպարեզ ունեն այդ հանձնաժողովները հացամթերումների կազմակերպման և անընդհատ ընթացքն ապահովելու գործում: Հացահատիկը ժամանակին հանձնելու, ապարատի թերությունները ժամանանակին հայտնաբերելու, աշխատողների անփութությունը մերկացնելու և, վոր պլանավորն է՝ կուլակի սպեկուլյանտային ձգտումների, աջ և «ձախ» ոսլորտունիստական յերևույթների և գործերի, կորզիչ տրամադրությունների, ծուլության և սիմուլյանտության դեմ պայքարելու գործում ոժանդակիչ հանձնաժողովներն աշխատանքի անձայր ասպարեզ ունեն: Նրանց խնդիրներն այստեղ մեծ և կարևոր են: Նրանք վերոհիշյալ յերևույթների դեմ պիտի պիսնեն մասսաները, նրանց դեմ պայքարելուն պիտի ծառայեցնեն ամբողջ մասսայական աշխատանքը: Այդ պատճառով վերոհիշյալ հանձնաժողովները վոչ միայն անհրաժեշտ է կազմակերպել, այլ պետք է նրանց վրա ամենալուրջ ուշադրություն դարձնել, բոլոր հասարակական և խորհրդային կազմակերպությունների կողմից ապահովել ամենաակտիվ աջակցություն նրանց աշխատողներին: Կուսակցական կազմակերպությունները պետք է ապահովեն հանձնաժողովներին իրենց աչալուրջ ղեկավարությամբ: Հանձնաժողովները պետք է ընտրել կոլխոզների ընդ-

հանուր ժողովներում, իսկ սովխոզներում—բանվորների ընդհանուր ժողովում: Նրանց մեջ պետք է մտցնել ամենաակտիվ և ազնիվ կոլխոզիկներին և բանվորներին և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին, խնչպես որինակ, կոլխոզների, կոմբլջի, կոմսոմոլի, կանանց ակտիվի, կոոպերացիայի, պրոֆմիությունների և այլն: Պետք է հանձնաժողովների աշխատի կազմ ապահովել, վոր միանգամայն ճշտորեն կիրառի կուսակցության գիծը հացամթերումների մեջ և հաստատ կանգնած լինի դասակարգային դիրքերում: Կուլակը պիտի փորձի անշուշտ իր արքային դիրքերում: Կուլակը պիտի փորձի անշուշտ իր արքային մտցնելու հանձնաժողովներն և այդ վերջիններս կազմակերպության տակ դնելու: Կուսակցական, խորհրդային և այլ կազմակերպությունները պետք է աչալուրջ հետևեն կուլակի այդ վտանգություններին և հնարավորություն չը պիտի տան նրան և նրա արքայակներին սողոսկելու հանձնաժողովների մեջ: Այդպիսի կազմակերպված ոժանդակիչ հանձնաժողովները միայն կարող են ապահովել այն կառուցողական խնդիրների իրագործումը, վորոնք զբաղված են նրանց վրա: Նրանք պետք է լինեն այն շտաբը, վորի շուրջը պետք է համախմբվեն գյուղական հասարակայնության բոլոր ուժերը: Նրանց միջոցով հացամթերումների համար տարվող պայքարի ընդհանուր շարժման մեջ պիտի դրվեն գյուղի բոլոր հասարակական կազմակերպությունները: Այդ կազմակերպություններից յուրաքանչյուրը պետք է հավաքի իր կերպություններից յուրաքանչյուրը պետք է հավաքի իր ուժերը և հացամթերումների պլանի հաջող և ժամանակին իրագործելու գործին պիտի ծառայեցնի: Այստեղ առանձնապես պետք է շեշտել պրոֆմիությունների վրա: Պետք է անպես պետք է շեշտել պրոֆմիությունները բավարար չա-

փոփ չեյին մասնակցում հացամթերումներին: Սակայն վերջին տարիներում պրոֆմիութենական կազմակերպությունները կարողացան բաժականին մեծ աշխատանք կատարել բանվորական մասսաների մեջ այդ ասպարիզում: Քաղաքից ուղարկված բանվորական բրիգադները մեծ ոգնութիւն եւ յին ցույց տալիս տեղական մթերող կազմակերպություններին: Այս տարի, չնայած վոր այժմ գործարաններից բանվորներին կտրելը աշխատանքի լծամանակ չի կարելի, այնուամենայնիվ այդպիսի ոգնությունը հարկավոր է: Պրոֆմիությունները, շեֆ կազմակերպությունների հետ միասին պետք է ոգտագործեն արձակուրդ գնացող բանվորներին: Զն՞ վոր նրանցից շատերը գյուղ են գնում իրենց արձակուրդն անցկացնելու: Ապա ուրեմն նրանցից կարելի չի փոքրիկ խմբեր կազմել և ուղարկել այս կամ այն կողմուղը հացամթերումների գործում ոգնելու համար: Բացի դրանից, պրոֆմիությունները լայնորեն պիտի ոգտագործեն գյուղում աշխատող իրենց անդամներին: Այնպիսի պրոֆմիություններ, ինչպիսին են խորհրդային ծառայողների, լուսավորության աշխատողների, բժշկական աշխատողների միությունները, պետք է կազմակերպեն իրենց անդամների մասսաները և լծեն հացամթերումների աշխատանքներին: Առանձնապես կարևոր է գյուղանտառ բանվորների միության գերը այդ ասպարիզում: Նա, բացի նրանից, վոր պետք է համախմբի իր մասսաները կուլակի դեմ պայքարելու համար, նաև հսկայական դեր ունի կատարելու սովխոզների բանվորներին, սովխոզի մթերման պլանի իրագործման համար մորիլիզացիայի յեթարկելու և նրանց աշխատանքային ենտուղիազմը գլխավորելու և համապատասխան հունի մեջ դը

նելու գործում: Պրոֆմիութենական կազմակերպություններն առաջնակարգ լծակ պետք է հանդիսանան սովխոզի արտադրական պլանի իրացման գործում, վորի կարևորագույն մասերից մեկն է հանդիսանում հացահատիկի մթերումը:

Հացամթերումների նախընթաց կամպանիաներում խոշորագույն դեր է խաղացել մեր կուսակցության ոգնական կոմսոմոլը: Այդ կազմակերպությունը ցույց է տվել իսկական հարվածային աշխատանքի որինակներ հացամթերումներին, ինչպես և ուրիշ կամպանիաների մեջ: Նա իր ակտիվ կազմակերպչական և մասսայական աշխատանքով տվել է մեր պետությանը տասնյակ և հարյուր հազարավոր ցենտներ հացահատիկ: Յերիտասարդական կարմիր գումակները յեղել են հացամթերումների հիմնական մեթոդներից մեկը: Ներկայիս հացամթերումներին կոմսոմոլը գինված այդ աշխատանքների հսկայական փորձառությամբ, կարող է խոշորագույն ոգնություն հասցնել: Նա պետք է մորիլիզացիայի յենթարկի ամբողջ գյուղական յերիտասարդությանը: հացամթերումների պլանի իրագործման ապահովելու համար: կոմսոմոլը սերտորեն պետք է կապի իր աշխատանքն այդ ասպարիզում կոլտոգային, խորհրդային և կուսակցական կազմակերպությունների հետ, իսկ վերջինները պետք է աշակցություն ցույց տան և ընդառաջ դնան կոմսոմոլին այդ գործում: կոմսոմոլն ավելի ևս լայնորեն պիտի աշխատանքը յերիտասարդական գումակներ կազմակերպելու գործում, վորպես յերիտասարդական բրիգադների հարվածային աշխատանքի արդյունք:

Նույնպես խոշոր դեր պետք է կատարեն հացամթերումների կամպանիայում կանայք: Կինկազմակերպություն

ները պետք է համախմբեն կանանց ուժերը հացամթերման խնդիրների շուրջը, ինչպես որինակ, կանանց գումակներ կազմակերպելու, հացահատիկների համար անհրաժեշտ տարա (տոպրակներ) ապահովելու գործում և այլն:

Վերջապես, գյուղի կուլտուրական ամբողջ աշխատանքը հացամթերումների ժամանակ պետք է ծառայի այդ նպատակին: Խրճիթ-ընթերցարանները, դպրոցները, պատի թերթերը, կինոները, ռադիոն, կուլտուրական և դեղարվեստական աշխատանքի բոլոր ձևերն ամենաալայն բացատրական և կազմակերպչական աշխատանք պիտի ծավալեն հացամթերումներին շուրջը: Մենք այդ ստպարիզում միշտ մի հիվանդություն ենք ունեցել՝ վոր մեր կուլտուրական աշխատանքը կամպանիաների ընդհանուր ընթացքի պոչիցն է ընկել: Անհրաժեշտ է ամեն ջանք գործ դնել, վոր նույնը չկրկնվի և այժմ: Կուլտուրական աշխատանքը հացամթերման դժվարությունների, առանձին թերությունների, կուլակային վտանձագությունների և ոպորտունիզմի դեմ մասսաները համախմբող ուժեղ լծակներից մեկը պետք է լինի:

Հացամթերումների պլանների իրադրծման համար մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու գործում բացառիկ նշանակություն ունեն մեր մամուլը և նրա թղթակցական բանակը: Նախընթաց կամպանիաներում մամուլի դերն անչափ մեծ եր: Նա անխղճորեն հայտնաբերում և խարազանում եր ամեն մի յերևույթ, վոր խանգարում եր պլանի իրադրծման:

Մեր բայլեկայան մամուլը միշտ ել յեղել է հացի համար մղվող պայքարի մեջ ամենամարտական և առաջավոր շոկատներից մեկը: Յեթե այդ տեսակետից մեր մամուլն

ունեցել է առանձին թերի կետեր, ապա այս տարվա կամպանիայում, նա մոբիլիզացիայի յենթարկելով իր թղթակցական բանակն, ավելի ևս բուռն թափով պիտի մերկացնի սև խփի ոպորտունիստական ինքնահոսի տրամադրություններն ու փաստերը, պիտի խարազանի անփութություն և դանդաղկոտություն փաստերը մթերող ապարատում, պիտի պայքարի հացամթերումների տեսնիկական բազան ապահովելու համար, լանորեն բացատրելով ու կիրառելով կուսակցության առաջադրած խնդիրները հնգամյակի յերրորդ, վճռական տարվա հացամթերումների առաջ: Մինչդեռ պետք է ասել, վոր այս տարվա մթերումների հենց սկզբում արդեն, դժբախտաբար, մամուլի առանձին ողակները հացամթերման նախապատրաստման խնդիրներում պոչում են գտնվել: Մենք վերև հնարավորություն ենք ունեցել հաղորդելու այնպիսի դեպքերի մասին, յերբ մամուլի վորոշ մասը, վոր ամենայն ճշտությամբ պիտի բացատրի կուսակցության առաջադրած խնդիրները մթերումների ապարիզում, «ձախ» քյալլադոդությունների մեջ է ընկնում: Դրան կարելի յե ավելացնել նաև մի շարք փաստեր, յերբ մեր առանձին թերթերն ուշ են սկսում իրենց աշխատանքը հացամթերումների կազմակերպման, մասսաներին այդ խընդրի շուրջը համախմբելու համար:

Այդպիսի փաստերի վրա յեն մատնանշում «Պրավդան» և «Մոլոտը», յերբ ոայոնական մի շարք թերթեր իրենց ուշադրությունը ժամանակին չեն դարձնում դեպի հացամթերման կամպանիան:

Վերոհիշյալ բոլոր կազմակերպությունների և մամուլի ամբողջ մասսայական աշխատանքն ուղղված պետք է լինի

մասաներին հացամթերման խնդիրները շուրջը համախմբելու նրանց աշխատանքային խանդավառութունը կազմակերպելու գործին: Հացամթերումների պլանի իրագործման հիմնական պայմաններից մեկն է հանդիսանում հացամթերման ամբողջ աշխատանքը, սոցիալիստական մրցակցության և հարվածաշունչության մեթոդները: Մեր սոցիալիստական շինարարության բոլոր ասպարեզներում մեր հաջողությունների հիմնական այդ բանալին ամենալայն ծավալում պետք է ստանա և հացամթերումների ասպարեզում: Գյուղը գյուղի հետ, կոլտոգը կոլտոգի հետ, բրիգադը բրիգադի՝ պիտի մրցեն հացամթերումների պլանը վոչ միայն իրագործելու, այլ և գերբերադործելու համար: Սոցիալիստական մրցակցությամբ պետք է ընդգրկվեն նաև անհատ, տնտեսությունները և բոլոր կազմակերպությունները: Աշխատանքի այդ ձևի ծավալումը պետք է ապահովի նաև հացամթերումների հանդիպական պլանների առաջադրումը և նրանց իրագործումը: Յուրաքանչյուր կոլտոգ, կոլտոգային բրիգադ, կոմսոմոլական բջիջ, գյուղխորհուրդ, ՄՏԿ մթերող և այլն կազմակերպություն սոցիալիստական մրցման կարգով իրենց վրա կոնկրետ պարտավորություններ պետք է վերցնեն վոչ միայն առաջադրված, այլ և հանդիպական պլանի իրագործման համար:

Սոցիալիստական մրցակցությունն ու հարվածաշունչությունը պետք է անցնեն՝ «վոչ մի փուլ հացահատիկ մասնավոր շուկային սպեկուլյացիայի համար» լոգոնդի տակ: Սոցիալիստական մրցակցության և հարվածաշունչության մեթոդով պետք է ապահովել հացամթերումների պլանի ժամկետից առաջ իրագործումը: Կոլտոգներն ու գործարանները մրցակցության պայմանագրեր պիտի կնքեն, վոր մեկը մթերման և այլ գյուղատնտեսական կամպանիաների պլաններն իրագործի, իսկ յերկրորդն իր արտադրական պլանները:

Վոր յերկուսն ել փոխադարձաբար ոգնեն իրար այդ աշխատանքում: Իրենց պլաններն ու պարտավորությունները հաջողությամբ իրագործող կոլտոգներն ու բրիգադները, ՄՏԿ ու մթերող կազմակերպությունները պետք է ոգնեն յես: Բնացողներին հասարակական բուքսերի մեթոդներով: Առանձնապես կարևոր է սոցմրցման ծավալումը մթերող կազմակերպությունների աշխատողների միջև, նրանց ոժանդակող ակտիվիստների և հանձնաժողովների միջև: Սոցիալիստական մրցակցության առաջավոր ջոկատ պիտի կազմեն սովխոզների, ՄՏԿ բանվորները: Կոմունիստներն ու կոմյերիտականները պետք է որինակ հանդիսանան այդ գործում ևս: Հացամթերումն ու գերբերադործումը սոցիալիստական մրցակցության ասպարեզում սոցիալիստական մրցակցության ծավալման գործի ամբողջ ղեկավարությունը պետք է ապահովեն տեղական կուսակցական կազմակերպությունները: Միայն բանվոր դասակարգի փորձած ու կոխած աշխատանքի այդ սոցիալիստական ձևերով կարելի չի ապահովել հացամթերումների հաջող կատարումը հնգամյակի յերրորդ, վճռական տարում:

V. ՏԵԽՆԻԿԱՄԵՍ ԶԻՆԵԼ ՀԱՅԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԸ

Այս տարվա հացամթերման կամպանիայի կարևորագույն խնդիրներից մեկը պետք է լինի հացամթերումների տեխնիկական բազայի կազմակերպման գործը: Նույնիսկ նախընթաց տարիներում հացամթերումների հիմնական դժվարություններից մեկը կայանում էր նրանց տեխնիկական բազայի անկազմակերպ և թույլ լինելու մեջ: Մեր ելնվատորները հաճախ պատրաստ չեյին լինում ընդունելու անհրաժեշտ քանակությամբ հացահատիկ: Պետք է հիշել, վոր այդ տեսա-

կետից մեր դրութիւնը շատ լարված է: Հացամթերումները տեխնիկական բազան մնում է դեռ ևս շատ սահմանափակ: Ելեվատորները, պահեստների և մանավանդ տրանսպորտի ու տարալի (տոպրակներ) թե քանակը և թե ծավալը դեռ ևս բավարար չէ: Մթերող կազմակերպութիւնների հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի մանավանդ այս տարվա հըսկա աճած հացամթերումներին լիովին պատրաստել հացահատիկն ընդունելու և տեղափոխելու տեխնիկական բոլոր հընարավոր միջոցները: Կուսակցութեան Յերկրային Կոմիտեյի 4-րդ պլենումը յերեկով այդ ասպարիզում հնարավոր դժվարութիւններից, պարտավորեցնում է բոլոր ղեկավարող, մըթերող և մասսայական կազմակերպութիւններին ժամանակին ապահովել հացամթերումներն անհրաժեշտ տեխնիկական բազայով: Տեխնիկական բազայի սահմանափակ լինելը մեծ ճկունութիւն է պահանջում բոլոր կազմակերպութիւններից՝ յեղած միջոցները ճիշտ ոգտագործելու համար: Այդ առթիւ կուսակցութեան Յերկրային Կոմիտեյի պլենումը վորոշել է.

«Առաջադիւ ռայկոմներին անմիջապէս ստուգել մքերոդների հացահատիկն ընդունելու (շինարարութիւն, նորոգում, տարա, կշեռք) յել կոլխոզների ու սովխոզների հացահատիկն հաճճնելու (կոլխոզի, սովխոզի տրանսպորտային միման կազմակերպումը և այլն) պատաստականութիւնը, պառնայել յեկաբուդային տրանսպորտի պատաստականութիւնը սեղափոխման համար»: Մի ուրիշ տեղում պլենումը ուրիշ դժվարութիւնների շարքում շեշտում է և տեխնիկական դժվարութիւնների վրա, վորոնց հաղթահարումը միայն ապահովելու յե հացամթերումների պլանի իրագործումը: Վերջապէս, «Պրավդան» իր № 173 -ում գրում է.

«Տեխնիկայի հարցերին—մաքսիմալ ռադիոլոպիւն—այդպիսին է առաջիկա կամպանիայի կարեւորագոյն լոգունգներէց մեկը, վորովհետեւ տեխնիկայի հարցերն ավելի ու ավելի վրնռական նեանակոպիւն են ստանում հացաւթերումների կազմակերպման գործում»:

Այս մեջբերումները միանգամայն բավարար չալիով պարզում են մեր առաջ հացամթերումների տեխնիկական բազայի կազմակերպման կարեւորագոյն նշանակութիւնը, մանավանդ հնգամյակի յերրորդ տարվա պայմաններում: Պետք է ամենաանհաշտ պայքար մղել հացամթերումների տեխնիկական բազայի կազմակերպման թերադհանատման դեմ: Մյուս կողմից պետք է ջախջախիչ հարված հասցնել նաեւ այնպիսի խոսակցութիւններին, թե՛ «քանի վոր հացամթերումների տեխնիկական բազան անբավարար է, ապա անհնարին է իրագործել հացամթերումների նշանակված տեմպերը: Պետք է դանդաղեցնել տեմպերը»: Այդ դժվարութիւններից անարեւելված, կապիտոլյանտական տրամադրութիւնների դեմ պետք է զինել մեր ամբողջ հասարակայնութիւնը և բոլոր ուժերն ուղղել դեպի տեխնիկական դժվարութիւնների հաղթահարումը: Կուսակցութեան հիմնական լոգունգը՝ «տիրապետել տեխնիկային»—հացամթերումների ասպարիզում իր լիակատար գործադրութիւնը պիտի գտնի, ինչպէս նաեւ ուրիշ ասպարեզներում: Հացամթերումների տեխնիկական դժվարութիւններից առանձին ուշադրութիւն պետք է նվիրել հետեյալներին.

1) Ելեվատորների և պահեստների քանակի ավելացումը և յեղածների նախապատրաստումը: Նկատի ունենալով ելեվատորների և պահեստների սահմանափակ թիւը, մեր կուսակցութիւնը վերջին տարիներում, ինչպէս և այս տարի ձեռնարկել է բազմաթիւ նոր ելեվատորների կառուց-

ման: Նրանցից շատերը կառուցված են: Սակայն այս տարի այդ ելեվատորների և պահեստների կառուցման գործն անբավարար դրության մեջ եր դառնվում մինչև վերջին ժամանակներս: Սպառնալիք կար, վոր այդ կառուցվող և նորոգվող պահեստներն ու ելեվատորները հացամթերումների սկզբին պատրաստ չեն լինի: Արդեն հիմա, յերբ հացամթերումները մասնավորապես սկսված են, տեղերից տեղեկութուններ են գալիս, վոր ելեվատորներն ու պահեստային կայանները չեն կարողանում ստացվող հացահատիկն ընդունել իրենց անպատրաստականության պատճառով: «Մոլոտը» իր № 3005-ում հաղորդում է, վոր Ուլիվսկի, Սպլինդրնսկի, Ռավենսկու, Բատալսկայինսկի և մի շարք ուրիշ ելեվատորներ չեն ընդունում հացահատիկները, վորովհետև պատրաստ չեն:

Այդ առթիվ Յերկրային Կուսկոմի 4-րդ պլենումը ըստիպված յեղավ հատուկ վորոշում ընդունել, վորի մեջ նա ընդգծում է.

«Շեշտելով նոր ելեվատորների պահեստների շինարարության անբավարարության և մի շարք տեղերում գոյութուն ունեցողների նորոգման ձգձգման վրա, հանձնարարել Յերկրագործկոմի Ֆրակցիային, ռալկոմներին, ռալգործկոմներին բավարարել «Սայուդիլներին» և «Կուսպուլեվոդիվ-սոյուզին» շինանյութերի պահանջը հերթից դուրս»:

Մեր մթերող և տեղական կազմակերպությունները պետք է ամենաշուտապիով միջոցների դիմեն այս վորոշումը ռեալիզացիայի յենթարկելու և ավարտելու ելեվատորների և պահեստների նորոգումն ու կառուցումը: Պետք է, նախընթաց տարիներին որինակով, ողնության կանչել հասարակայնությունը, նոր պահեստներ հայտնաբերելու և ոգտագործելու համար:

Բացի դրանից, հենց հացահատիկի ընդունելությունը պահեստներում պետք է այնպես կազմակերպել, վոր վոչ մի ձգձգման, հերթերի տեղիք չտրվի, վոր մանավանդ հացահատիկը հանձնողներին հաշիվներն անմիջապես կատարվեն, առանց վորևէ ձգձգման:

Յերկրորդ և հիմնական դժվարությունն է տրանսպորտի կազմակերպման և հացահատիկի արագ տեղափոխման խնդիրը: Նախ և առաջ պետք է կազմակերպել և պլանային ձևով ոգտագործել կոլխոզի, սովխոզի և այլ հացահատիկ հանձնողների տրանսպորտային միջոցները: Պետք է ճիշտ բաժանել յեղած միջոցները՝ գյուղատնտեսական բոլոր գույքնթաց աշխատանքները, նույն թվում հացամթերումները, տրանսպորտով ապահովելու համար: Վոչ մի դեպքում թույլ չպիտի տալ, վոր հացահատիկային խոշոր մասսաներ մնան յերկաթուղուց հեռու ընկած կետերում և դրանով վնասեն մեր ժողտնտեսական պլանի հաջող և անընդհատ իրացման գործին:

Առանձին խոշոր պատասխանատվություն է ընկնում հացի տեղափոխման գործում յերկաթուղային տրանսպորտի վրա: Հայտնի յե, թե վորքան լարվածությամբ է աշխատում մեր յերկաթուղային տրանսպորտը: Այդ հանգամանքն առավել ևս լուրջ ուշադրություն է պահանջում բոլոր կազմակերպություններից յերկաթուղային տրանսպորտը հացամթերումներին պատրաստելու համար: Յերկաթուղագծի վրթերումներին պատրաստելու համար: Յերկաթուղագծի վրանվորներն անմիջապես պիտի ստուգեն իրենց պատասխանատվությունը և ապահովեն հացահատիկը գյուղից արցյունաբերական կենտրոններ տեղափոխելու գործը:

Յերկաթուղային տրանսպորտի բավորները պիտի իմանան, վոր այս տարվա հացահատիկային շատ ավելի մեծ բեռները պիտի տեղափոխվեն համարյա միևնույն քանակու-

Թյամբ վագոններով և լոկոմոտիվներով: Նշանակում և տե-
րանսպորտն իր վրա դրված խնդիրները պիտի կատարի
ի հաշիվ ծայր աստիճան լարվածության և յուրաքանչյուր
վագոնի մաքսիմալ ոգտագործման: Նույնպիսի լարվածու-
թյամբ պիտի աշխատի նաև ջրային տրանսպորտը:

Յերրորդ տեխնիկական դժվարությունը հացամթերում-
ների գործում կայանում է տարայի (տոպրակների) պակա-
սության մեջ: Յեթե նախընթաց տարիներում այդ պակա-
սությունը սուր կերպով իրեն զգալ եր տալիս, ապա այս
տարի դա ավելի ևս պիտի զգացվի, վորովհետև ա-
վելի շատ հացահատիկ պիտի մթերվի: 1929 թվի հացամե-
թերումների սկզբին պակասում եր 15 միլիոն տոպրակ:
Այս տարի միայն Ուկրաինայի համար պակասում է 13 մի-
լիոն տոպրակ: Մինչդեռ տեղական կազմակերպություններն
ու մթերողներն անհրաժեշտ միջոցների չեն դիմում այդ
պակասող տարան հավաքելու և հացամթերումները նրան-
ցով ապահովելու համար: Այդ դրությունից յերկու յեղջ հը-
նարավոր և ընդունելի յե մեղ մոտ: Առաջինը և գլխավորը
արդեն մեր սոցիալիստական շինարարության բոլոր ասպա-
րեզներում ստուգված ձևն է — մասսայական աշխատանքով
համախմբել մասսաները, հասարակական և ալ կազմակեր-
պությունները՝ տոպրակները հայտնաբերելու և հավաքելու:
Համար: Այդ միջոցով, որինակ, 29 թվին պակասող 15 մի-
լիոնից 10 միլիոն տոպրակ հավաքված եր: Այս տարի հնա-
րավոր է անագին քանակությամբ տոպրակներ հավաքել,
յեթե բոլոր հասարակական կազմակերպությունները և աշ-
խատավոր մասսաները մոբիլիզացիայի յենթարկվեն այդ
պությունները, չնայած արդեն մթերող կազմակեր-
նակն են գտնվում, դեռևս տարայի մոբիլիզացիայում հա-

մարյա վռչինչ չեն արել։ Նույն Ուկրայնայում, նախական
հաշիվների համաձայն, զանազան հիմնարկներէց և կոլտոգ-
ներէց հնարավոր ե հաժաքել մօտ 5 միլիոն տոպըակ։ Նույն-
պիսի խոշոր հնարավորութիւններ կան նաև Հյուսիսային
Կովկասում։ Տարայի մորելիդացիայի գործում խոշորագուն
աշխատանք ելին կատարել անցյալ և նախանցյալ տարի-
ների ընթացքում յերիտասարդական կազմակերպութիւն-
ները (կոմսոմոլը, պիոներները)։ Այս տարի ևս նրանք անգնա-
հատելի ոժանդակութիւն կարող են մատուցել այդ գործում։

Տաբաթի պակասութիւնը թեթևացնելու յերկրորդ հնարավորութիւնն է առանց տարախի հացահատիկի տեղափոխման կազմակերպումը: Դրա համար անհրաժեշտ են տեղափոխման հատուկ միջոցներ, վոր վոչ մի հատիկ ցորեն կամ մի ուրիշ կուլտուրա իզուր չթափվի, չփչանա:

կամ մի ուրիշ կուլտուրա իդուր չընդունելով, չէին
Այդ գործում եւս մեր մթերող կազմակերպութեանները,
կոլխոզներն ու սովխոզներն ամենավերջին տեղեկութեան-
ներէր համաձայն, դեռ թույլ են աշխատում: Այդ հանգաման-
քը մեծ անհանգստութեան է առաջ բերում, վոր տարայի
պակասութեանը կարող է լուրջ կերպով խանգարել հացա-
հատիկների մթերման և ժամանակին տեղափոխման: Գյու-
ղի, կոլխոզի, սովխոզի և մանավանդ հացամթերող կազմա-
կերպութեաններն անմիջապես պետք է կտրուկ միջոցների
գիրման և առաջին հերթին պետք է լաշն մասսայական աշ-
խատանք ֆծավալեն այդ խնդրի շուրջը: Կոլխոզներին
չքաւոր-միջակ դոլդացիութեան ակտիւ մասնակցութեամբ
միայն հնարավոր է հաղթահարել նաեւ տարայի պակասութեան
դժվարութեանները:

Հարգերից պետք է ա-

Հաջամթերման տեսնիկական հարցերից պետք է առանձնապես շեշտել հացահատիկի մուտքի և յուղի հաշվառելի կորուստների դեմ պայքարի վրա: Հացահատիկի կորուստների դեմ պայքարի վրա:

տիկի բերքահավաքն ու հացամթերումները պետք է անց-
նեն «վոչ մի փութ կորցրած, փչացրած հացահատիկ» լո-
ղոնդի տակ: Բերքահավաքի և մթերումների աշխատանք-
ների բարդ պրոցեսները, սկսած հունձից մինչև վերջին
փութ հատիկը վազոն բռնելը և նույնիսկ սպառողին հանձ-
նելը, պետք է այնպես կազմակերպված լինեն, վոր վոչ մի
փութ հատիկ կորուստի տեղիք չտան: Կուսակցության Հ.Կ.
Յերկրային Կոմիտեյի 4-րդ պլենումը հատուկ զերեկտիվ է
տալիս այդ առթիվ բոլոր կուսակցական, խորհրդային, մը-
թերող և այլ կազմակերպություններին:

«Պլենումն չառանձնապես պարտավորեցնում է բոլոր
կուսակազմակերպություններին ու մթերողներին անողոր
պայքար մղել հացահատիկի կորուստները դեմ բերքահավա-
քի, տեղափոխությունների և ընդունելու (պահեստներում)
ժամանակ մոբիլիզացիայի յենթարկելով դրա շուրջը կոլ-
խոզնիկներին և հացամթերող ապարատի աշխատողներին»:

Հացի խնայողության գործում խոշոր նշանակություն
ունի ճիշտ հաշվառքը: Այդ պատճառով պետք է ամրապն-
դել մթերող կազմակերպությունների հաշվառքային ապա-
րատը ներքևից մինչև վերև, պետք է խիստ հսկողություն
սահմանել նրա աշխատանքի վրա: Այդ խնդիրը հացամթե-
րումների կամպանիայի կարևորագույն խնդիրներից մեկը
պիտի հանդիսանա:

Ի վերջո պետք է մի անգամ ևս շեշտել այս տարվա հա-
ցամթերումների տեխնիկական բաղայի կարևորագույն նը-
շանակության վրա: Պետք է հիշել, վոր ամենալավ կազմակերպ-
ված հացամթերումներն անգամ կարող են վիժել, յեթե նը-
րանց տեխնիկական բաղան-պահեստները, տրանսպորտը,
տարան լավ կազմակերպված չլինեն:

VI ՀԱՅԱՍՏԵՐՈՒՄՆԵՐԸ ՇԱՂԿԱՊԵԼ ՈՒՐԻՇ ԿԱՄՊԱՆԻԱՆԵՐԻ ՇԵՏ

Հացամթերումները ուժեղագույն լծակներից մեկն է
յեղել գյուղի մատակարարումն արդյունաբերական մթերը-
ներով: Այդ խնդիրն այժմ էլ խոշորագույն նշանակություն
ունի թե՛ հացամթերումների աշխուժացման և թե՛ ապրան-
քային շրջանառության աշխուժացման տեսակետից: Հա-
ցամթերումների ընթացքում գյուղը պետք է ապահովել
մեծ քանակությամբ արդյունաբերական ապրանքներով
և ոգտագործել մատակարարման գործը՝ հացամթերում-
ներին աշխույժ ընթացք տալու համար: Առաջին
հերթին ապրանքներով պետք է ապահովել այն գյու-
ղերը, կոլխոզներն ու սովխոզները, վորոնք ամենից ա-
վելի հաջողությամբ են կատարում հացամթերումների պլան-
ները: Յերկրային Կուսկոմի վորոշման համաձայն, Յ-րդ կը-
վարտալում յերկրամաս բերելու նշանակված ապրանք-
ների 70 տոկոսից վոչ պակասը յերկրամաս պիտի
բերվի ոգոստոսի 1-ից վոչ ուշ, վորի մի մասից
պետք է ռեզերվային ֆոնդ կազմել հացամթերումների տե-
սակետից լավագույն կոլխոզների և սովխոզների պար-
զեատրման համար: Ապրանքներով մատակարարելու տե-
սակետից կարևոր է նաև, վոր մթերողներն իրենց հանձնած
հացահատիկի համար հաշիվներն անմիջապես կատարեն և
վճարեն հացահատիկի համար հասանելի գումարը, անց-
կացնելով այդ հաշիվները պետրանկի բաժանմունքների մի-
ջոցով, կամ վճարելով նաղդ փողով:

Հացամթերումները սերտորեն պետք է շաղկապել նաև
գյուղում անցկացվող ֆինանսական միջոցառումների հետ:
Հացամթերումների ընթացքում պետք է ծավալել միջոցների

մորելիզացիայի աշխատանքը: Բոլոր կաղմակերպությունները, ամբողջ հասարակայնությունը, հացամթերումների աշխատանքների անքակտելի մի մասը պիտի դարձնեն բնակչության միջոցների մորելիզացիայի և ֆինանսական պլանի կատարման գործը: Այստեղ պիտի մտնեն գյուղատնտեսական հարկի, ապահովագրական մուծումների, կոնսրակտացիայով ստացված ավանսների դանձումը, «Հնգամյակի յերրորդ, վճռական տարվա» փոխառության տարածումը և այլն:

Վերջապես, հացամթերումների կամպանիայի հետ միաժամանակ անցնելու յեն նաև բերքահավաքի, աշնանավարի և աշնանացանի կամպանիաները: Մենք վերև արդեն առիթ ենք ունեցել հիշելու այդ մասին և այստեղ պետք է ավելացնել միայն, վոր այդ կամպանիաների ղուլդընթացությունը վոչ մի կերպ չպիտի ազդի վոչ մեկ և վոչ մյուսի հաջող իրագործման վրա: Պետք է հմուտ կերպով դասավորել բոլոր ուժերը, կաղմակերպել բոլոր աշխատանքները, ճիշտ բաժանել ինվենտարը, լծկան ուժը և աշխատող ձեռքերը: Դրանից կախված կլինի բոլոր կամպանիաների հաջողությունը: Այս տարի առանձնապես կարևոր նշանակություն է ստանում այս խնդիրը, քանի վոր բերքահավաքից ազատված արտերից շատերն անմիջապես պիտի վարել ցեղերի համար: Այս հանգամանքը պետք է կոլխոզների, սովխոզների և ՄՏԿ-ների և կոլխոզնիկների լայն մասնանների ավելի լուրջ ուշադրությունը գրավի:

Վերոհիշյալ բոլոր կամպանիաները (հացամթերումները, մատակարարման գործը, միջոցների մորելիզացիան, աշնանավարն ու աշնանացանը) սերտորեն շաղկապված են իրար հետ: Մեկի անհաջողությունը կարող է պատճառ դառնալ մյուսի անհաջողության և ընդհակառակը, նրանցից

յուրաքանչյուրը պիտի ծառայի մյուսի հաջող կատարման: Միայն հմուտ ղեկավարությամբ և նրանց շուրջը մասսաները մորելիզացիայի խնթարկելով կարելի յե ապահովել բոլոր այդ կամպանիաների և մասնավորապես հացամթերումների հաջողությունը:

VII ԿՈՒՍՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆՆ Ե

Վերջին հաշվով ամբողջ կամպանիայի (հացամթերումների) հաջողության հիմնական պայմանն է հանդիսանում այդ կամպանիայի վրա կուսակցական ղեկավարության ապահովումը: Հացամթերումների բոլոր դժվարությունների լուծումը կախված կլինի կուսակցության կաղմակերպության ակտիվությունից, նրա հմտությունից: Նա պետք է ապահովի իր ղեկավարությունը բոլոր կաղմակերպությունների մեջ, ժամանակին պետք է յերեսը դարձնի դեպի մթերման սպառնացող կետերը, իր ամբողջ ուժերով հարձակվի դրանց վրա և թամանակին վերացնի ստացված ճեղքվածքները, իսկ առավել ևս նրանց հնարավորությունը: Կուսդեկավարությունն ապահովված պետք է լինի սկսած կամպանիայի սկզբից, նախապատրաստությունից, պլանները նշանակելուց մինչև պլանների իրագործումն ու գերիրագործումը:

Նախընթաց տարիներում մենք շատ փաստեր ունեյինք, յերբ տեղական կուս-կաղմակերպությունները փոխանակ աշխատանքի լծվելու և պլաններն իրագործելու, հաճախ շարունակում էին խոսակցությունները պլանի ռեալ կամ վոչ ռեալ լինելու մասին: Այս «դիսկուսիաները» վնասից բացի, ուրիշ

վոչինչ չեյին տալիս, վորովհետեւ մինչեւ մարդիկ դրանով են դբազվում, կուլակն ու սպեկուլյանտը նրանց քթի տակից հացահատիկը հավաքում և քշում եյին մասնավոր շուկան: Այս տարի պետք է անխնայորեն խփել, ջախջախել «դիսկուսիաների» յուրաքանչյուր փորձ պլանը սահմանելուց հետո: Պլանը քննելիս պետք է հաշվի առնել բոլոր պայմանները և արդեն մի անգամ նշանակված պլանի շուրջն այլևս վոչ մի վիճաբանություն և խոսակցություն: Հենց այդպես է դընտում հարցը Յերկրկուսկումի 4-րդ պլենումը, վորը հրահանգում է.

«Յերկրային կազմակերպությունները կողմից հացամթերումների պլանը հաստատվելուց հետո արգելելամեն մի դիսկուսիա պլանի և հացա-ֆուրաժային բալանաների մասին»:

Կուսակցական կազմակերպություններն աշաւուրջ պետք է հետեւեն հացամթերումների ճիշտ կազմակերպման, ուժերի ճիշտ բաժանման, տեխնիկական բազայի ապահովման, հացամթերող ապարատի ամրապնդման խնդիրներին: Նրանք պետք է շարժման մեջ դնեն այս կամպանիայում կոլխոզնիկները, բանվորները, անհատավար չքավոր-միջակ ամենաւայն մասսաները, պետք է կազմակերպեն նրանց հացի պլանի իրագործման համար, պետք է ղեկավարեն նրանց ստեղծագործող ենտուզիաղով, նրանց մրցակցական և հարվածային շարժումը:

Կուսակազմակերպություններն անողոք պայքար պետք է հայտարարեն ինքնահոսի բոլոր արամադրություններին, կուլակային ագենտ և ներկայիս գլխավոր վտանգ աջ ոպորտունիզմին և «ձախ» շեղումներին, վորոնք ոգնում են ըստ եյության աջերին:

Հացամթերումների ընթացքը, նրա ամեն որվա դրությունը հայտնի պետք է լինի կուսակցական կազմակերպու-

թյան: Հացամթերումները կուսակազմակերպությունները մարտունակության ստուգատեսը պետք է լինեն: Այստեղ նրանք պետք է ցույց տան, թե վորքան նրանք ընդունակ են պայքարելու հնգամյակը չորս տարում իրագործելու, հնգամյակի յերրորդ, վճռական տարվա հաղթանակն ապահովելու համար:

Կուսակազմակերպությունները մոտիկ աջակիցն ու ոգնականն այս բոլոր խնդիրներում պետք է լինի գլխորհուրդը և խորհրդային որգանները: Պետք է ասել, վոր նախընթաց և խորհրդային որգաններում գյուղխորհուրդ դերը հաճախ տարիների հացամթերումներում գյուղխորհուրդ դերը հաճախ անցնում էր կուսակցական կազմակերպություններին, վորովանցնում էր կուսակցական կազմակերպություններին, վորովհետեւ առաջինները շատ անգամ հայտնաբերում էին իրենց հետևողությունն այդ աշխատանքներում և չեյին կարողանում ապահովել կամպանիայի ղեկավարությունը: Այս տարի այդպիսի յերևույթներին միանգամայն պետք է վերջ դնել: Գյուղխորհուրդները, վորպես պրոլետարական դիկտատուրայի որգանները, խոշոր ղեկավարող, կազմակերպիչ դեր պետք է կատարեն ընթացիկ տարվա հացամթերումներին: Նրանք մոբիլիզացիայի յենթարկելով կոլխոզային և չքավոր-միջակ անհատավար մասսաները, իրենց շուրջը կենտրոնացնելով գյուղի հասարակայնությունը, պետք է դառնան հացամթերումների մարտական շտաբը: Կոնտրակտացիոն պայմանագրերի ճշտումը, նրանց կատարման հսկողությունը—դա գյուղխորհրդների խնդիրն է:

Գյուղխորհուրդը պետք է ապահովի կուլակների պարտադիր առաջադրությունների կատարումը, հաղթահարելով հասարակայնության ոգնությամբ նրանց դիմադրությունը: Գյուղխորհուրդը պետք է մոբիլիզացիայի յենթարկի գյուղի ակտիվ ույժերը՝ հացի սպեկուլյացիայի դեմ պայքարելու համար:

Ստացված հացամթերման պլանները գլխորհուրդները պարտավոր են գյուղական ժողովներում քննության դնել և հետո հասցնել այդ պլանները մինչև կոլխոզ, կոնտրակտացիոն պայմանագրերի միջոցով ապահովելով նրանց լիակատար իրագործումը: Ռայզործկոմները պետք է մշտական, ոպերատիվ ղեկավարություն իրագործեն գյուղխորհուրդների աշխատանքում:

Խորհրդային որդաններն ընթացիկ կամպանիայում պետք է իրենց բարձրության վրա կանգնեն և խորհրդների 4-րդ համագումարի վորոշումների համաձայն պետք է դառնան գյուղի սոցիալիստական վերաշինության մարտունակ ղեկավարները կուսակցության առաջնորդությամբ:

Կուսակցական կազմակերպություններն ու գլխորհուրդներն անշուշտ կկարողանան իրագործել այս տարվա հացամթերումների առաջադրած մարտական խնդիրները, մոբիլիզացիայի յենթարկելով գյուղի ամբողջ հասարակայնությունը և կոլխոզային ու չքավոր-միջակ անհատավարների ամենալայն մասսաները: Այդ միջոցով նրանք պիտի ուղղեն իրենց առաջին հարվածը կուլակին, վորն անշուշտ արդեն սկսել է իր քայքայիչ աշխատանքը կոլխոզների ներսից ու դրսից, հացամթերումների պլանը վիժեցնելու համար, աջ ոպորտունիստին, վոր դեռ չի կորցրել կուլակին փրկելու իր հույսերը, «ձախ» քյալազոյդին, վոր ջուր է ածում աջ ոպորտունիստի և ապա ուրեմն կուլակի աղորիքին:


Հիշելով հացամթերումների հսկայական քաղաքական-տնտեսական նշանակությունը, կուսակցական կազմակերպությունները և գյուղխորհուրդները պետք է իրենց ամբողջ ուշադրությունը լարեն հացամթերումները գյուղատնտեսության սոցիալիստական հիմքական խնդրին—կոլեկտիվացման ամրապնդման և հետագա ծավալման խնդրին ծառայեցնելու

համար: Այս տարվա հացամթերումների կազմակերպման հսկա առավելությունները հնարավորություն են տալիս մեզ ավելի լավ կազմակերպելու և անցկացնելու այդ կամպանիան և այդպիսով ապահովելու մեր ժողտնտեսության 1931 թվի—հնգամյակի յերրորդ, վճռական տարվա խնդիրների լիակատար ոգտագործումը:

Հացամթերումներն արդեն սկսվում են: Սկսվում է լայն շարժում կոլխոզային մասսաների մեջ պլանը իրագործելու համար: Կարմիր գումակները շարժվում են դեպի պահեստները, ելեվատորներն ու քաղաքները: Կուսակցական և խորհրդային կազմակերպությունները պետք է այդ շարժման դուռը կանգնեն և տանեն մասսաները դեպի նոր հաղթանակներ հացամթերումների ֆրոնտում, ապա նաև մեր սոցիալիստական ծավալուն հարձակման, համատարած կոլեկտիվացման լիակատար ավարտման և այդ քաղայի վրա կուլակության վորպես դասակարգի վոչնչացման ֆրոնտներում:

Կուսակցությունն ու բանվոր դասակարգը, հենվելով կոլխոզնիկի— գյուղատնտեսության այդ կենտրոնական դեմքի վրա, անշուշտ այս տարի ևս հաղթանակելով բոլոր դժվարությունները, կկատարեն առաջադրված պլանը և կտանեն մեր յերկիրը սոցիալիստական դարգացման ուղիով դեպի նոր հաղթանակներ, դեպի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը հնգամյակի յերրորդ, վճռական տարում:

Առաջ, դեպի հացամթերումների պլանի իրագործումը, առաջ, դեպի սոցիալիզմը:



<< Ազգային գրադարան



NL0230189

42506

54 992

Тираж 8 коп.

Цена 8 коп
с. х. 10. 0.



На армянском языке

Т. Х.

БОЕВЫЕ ЗАДАЧИ ХЛЕВОЗАГОТОВОК

Сев.-Кав. Кр. отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР.
„КРАЙНАЦИЗДАТ“